





ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«31» հունիսի 2018թ.

N 234/Ն

ք. Ստեփանակերտ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՉԻ (ՂԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՍԱՐ ԱՆՅԱԿՎՈՂ ՄՐՅՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 167-Ն ՀՐԱՄԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Յանայեթոտության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Յանայեթոտության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

- 1. Հաստատել «Ուսումնական հաստատության ուսուցչի (ղաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Յանայեթոտության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի հունիսի 19-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը հաստատելու մասին» N 167-Ն հրամանը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Լ. ԱՐԱԲԱՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կրթության, գիտության և սպորտի նախարարի
2018 թվականի հունիսի 31-ի
N 234/Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՅՉԻ (ՂԱՍՏԻԱՐԱԿԻ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՍԱՐ ԱՆՅԱԿՎՈՂ ՄՐՅՈՒՅԹԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1. Սույն կարգով սահմանվում են հանրակրթական պետական հիմնական և նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) ուսուցչի, ղաստիարակի թափուր տեղը (այսուհետ՝ Թափուր տեղ) համարելու մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպման և անցկացման հետ կապված գործատուի և մրցույթին մասնակցող անձի կամ անձերի (այսուհետ՝ Մասնակից) միջև ծագող իրավահարաբերությունները:
2. Թափուր տեղ է համարվում մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և տվյալ հաստատության տարիֆիկացիայի ցուցակով նախատեսված՝ ուսուցչի (ղաստիարակի) չգրադեցրած պաշտոնը:
3. Թափուր տեղ առաջանալու դեպքում տնօրենը դասաժամերը տրամադրում է նույն Հաստատությունում տվյալ առարկան արդեն դասավանդող՝ դրույթաչափը չլրացած ուսուցչին, կարող է տրամադրել նաև համատեղությամբ աշխատող, համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող մասնագետին:
4. Հաստատությունում մրցույթ հայտարարվում է, եթե տվյալ առարկան դասավանդող ուսուցիչ(ներ)ն ունի(ունեն) մեկ դրույթ ծանրաբեռնվածություն, իսկ թափուր մնացած ժամաքանակը վեց և ավելի է:
5. Թափուր տեղ առաջանալու մասին տնօրենը տեղեկացնում է լիազոր պետական մարմնին:
6. Մրցույթը հայտարարվում է Թափուր տեղ առաջանալու օրվանից՝ 5-օրյա ժամկետում, բացառությամբ տվյալ ուսումնական տարվա մարտի 31-ից մինչև օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում առաջացած թափուր տեղերի:
7. Առաջացած Թափուր տեղի համար առաջին անգամ հայտարարված մրցույթը

- անկախ պատճառներից չկայանալու դեպքում հայտարարվում է մրցույթ 2-րդ անգամ: Թափուր տեղը 2-րդ անգամ մրցությամբ կարգով չհամարվելու կամ հաղթող չճանաչվելու դեպքում (անկախ պատճառներից) լիազոր մարմնի թույլտվությամբ որոշակի ժամկետով պայմանագրով աշխատանքի կարող են ընդունվել համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող անձինք, իսկ Լեռնային, բարձր-Լեռնային, սահմանամերձ և վերաբնակեցվող բնակավայրերի Հաստատություններում՝ նաև ուսուցչի որակավորում շնորհող բուհերի հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերի համապատասխան մասնագիտությամբ սովորող ուսանողները:
8. Հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, սակայն տվյալ առարկան չդասավանդած կամ չդասավանդող մասնագետը Թափուր տեղը կարող է զբաղեցնել մրցությամբ կարգով:
9. Հաստատությունում մրցույթ չի հայտարարվում, և Թափուր տեղը զբաղեցվում է ոչ մրցությամբ կարգով, եթե՝
1) տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու կամ հիվանդության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում),
2) առաջացած ժամերը տնօրինվել են սույն կարգի 3-րդ կետի համաձայն,
3) թափուր ժամերն առաջացել են 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում,
4) առկա է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից երաշխավորված նպատակային ծրագրերով ուղեգրված մասնագիտական կրթություն ստացած կամ վերավորակվող թեկնածու,
5) առկա է տվյալ ուսումնական տարվա կտրվածքով Մրցույթում հաղթող ճանաչված,

- բայց ըստ առաջնահերթությունների աշխատանք չստացած մասնակից,
6) թափուր ժամերն առաջացել են տվյալ ուսումնական տարվա մարտի 31-ից հետո:
10. Սույն կարգի 9-րդ կետի առաջին, երկրորդ, չորրորդ և հինգերորդ ենթակետերով սահմանված դեպքերում աշխատողի հետ կնքվում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր:
11. Մրցույթն անց է կացվում երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Յուրաքանչյուր փուլի համար նախարարության կողմից մշակվում է հարցաշար՝ կազմված 100 հարցից՝ գրավոր փուլի համար և 150 հարցից՝ բանավոր փուլի համար, որից 50-ը՝զուտ առարկայական-մասնագիտական: Մասնագիտական հարցերի մեջ կարող են լինել գործնական առաջադրանքներ, որոնք կազմվում են մրցութային հանձնաժողովի կողմից՝ ըստ նախանշված թեմաների: Հարցաշարերը հաստատվում են Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով և հրապարակվում Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության edu.nkr.am պաշտոնական կայք էջում և «Լուսարար» պաշտոնաթերթում:
12. Թափուր տեղը համարվում է համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը Հաստատության տնօրենի ներկայացմամբ լիազոր մարմինը հրապարակում է «Լուսարար» պաշտոնաթերթում, Արցախի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կայքէջում (edu.nkr.am) և Արցախի հանրային հեռուստատեսությամբ՝ մրցույթն անցկացնելուց առնվազն մեկ ամիս առաջ:
13. Հայտարարության տեքստում նշվում

- են.
1) հաստատության անվանումը, վայրը,
2) թափուր տեղի անվանումը, շաբաթական ժամերի քանակը,
3) սույն կարգի 11-րդ կետով սահմանված մրցույթի անցկացման ձևերը և բովանդակությանը վերաբերող դրույթները,
4) սույն կարգի 17-րդ կետով սահմանված փաստաթղթերի ցանկը՝ բնօրինակները և պատճենները,
5) մրցույթի անցկացման օրը, ժամը, տեղը և փաստաթղթերի հանձնման վերջնաժամկետը:
14. Մրցույթին մասնակցելու մասին փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:
15. Մրցույթի անցկացման օրը նշանակվում է փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

III. ՄՐՅՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՍՈՒՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱՐԳԸ

- 16. Մրցույթին կարող է մասնակցել Հաստատության տվյալ Թափուր տեղին ներկայացվող՝ «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Յանայեթոտության օրենքի 24-րդ հոդվածի և 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:
17. Մրցույթին մասնակցելու համար անձը հաստատության տնօրենին (այսուհետ՝ Տնօրեն) է ներկայացնում.
1) դիմում (Ձև 1),
2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձնագիր,
4) աշխատանքային գրքույկ,
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
13. Հայտարարության տեքստում նշվում

ԿԱՐԳ

3 7) այլ պետությունների քաղաքացիների՝ Արցախի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Արցախի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,

9) հրատարակված հողվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),

10) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

18. Տնօրենը կամ նրա կողմից նշանակված պատասխանատու աշխատակիցը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում:

19. Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- 2) տառապում է այնպիսի հիվանդությանը, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը,
- 3) խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից,
- 4) դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,
- 5) զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից, կամ որին օրենքի համաձայն՝ արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել:

IV. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

20. Մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվում է մրցույթի անցկացմանը նախորդող աշխատանքային օրը, անվանական կազմը հաստատում է շրջանի շրջվարչակազմի, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժնի վարիչը՝ այդ մասին տեղեկացնելով հանձնաժողովի անդամներին:

21. Հանձնաժողովը կազմված է 5 անդամից.

- 1) Հանձնաժողովի նախագահը շրջանի շրջվարչակազմի, Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժնի վարիչն է (վարիչի պաշտոնակատարը) կամ բաժնի ներկայացուցիչը,
- 2) ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության ներկայացուցիչը, տվյալ Հաստատության տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը) կամ տնօրենի ուսումնական գծով տեղակալը, երկու ուսուցիչ այլ հաստատություններից՝ համաձայնությամբ (տվյալ առարկայի դասավանդման առնվազն 5 տարվա փորձ ունեցող):

22. Հանձնաժողովի նիստն իրավագործ է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Քվորում չապահովելու դեպքում նիստը կարող է հետաձգվել 2 անգամ՝ մինչև 3 աշխատանքային օրով:

23. Հանձնաժողովի որոշումներն արձանագրվում են քարտուղարի կողմից (որը հանձնաժողովի անդամներից մեկն է), առանձին մատյանում և պահպանվում են տվյալ դպրոցում: Մատյանն ավարտվելուց հետո արխիվացվում է օրենքով սահմանված կարգով:

24. Սույն Մրցույթին մասնակցելու թույլտվություն չտալու դեպքում հանձնաժողովը հիմնավոր պատճառաբանությամբ մասնակցին գրավոր ներկայացնում է մերժման իրավական հիմքերը (օրենսդրական կամ գերա-

տեսչական ակտի անվանումը, դրույթը):

25. Եթե հանձնաժողովը մրցույթին մասնակցելու համար դիմած անձանցից ոչ մեկին չի թույլատրում մասնակցել մրցույթին, ապա հանձնաժողովի կողմից ընդունվում է մրցույթը չկայացած համարելու մասին որոշում, և սույն կարգի 4-րդ կետի համաձայն՝ հայտարարվում է նոր մրցույթ:

V. ԳՐԱՎՈՐ ՍՏՈՒՊԱՆ ՓՈՒԼ

26. Մրցույթն անցկացվում է բացառապես նախարարի հաստատած հարցաշարի (այսուհետ՝ Հարցաշար) հիման վրա:

27. Գրավոր փուլի համար հանձնաժողովը կազմում է թեստային առաջադրանք՝ բաղկացած Հարցաշարի 100 հարցից և դրանց երեք ենթադրյալ պատասխաններից, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է, որը նշված է Հարցաշարում:

28. Գրավոր փուլն անցկացվում է այդ նպատակի համար առանձնացված սենյակում:

29. Մասնակիցը թեստավորմանը մասնակցելու համար ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ: Հանձնաժողովի քարտուղարն ստուգում է Մասնակցի ինքնությունը և թույլատրում նրան մուտք գործել թեստավորման անցկացման սենյակ: Մասնակցների մուտքը սենյակ դադարեցվում է թեստավորումն սկսելուց 10 րոպե առաջ:

30. Մասնակիցներին արգելվում է իրենց հետ սենյակ ներս բերել կապի միջոցներ, տպագիր, մեքենագիր, ձեռագիր նյութեր կամ այլ տեխնիկական սարքեր:

31. Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցներին բացատրում է թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, պատասխանում է մասնակիցների՝ մրցույթի անցկացմանը վերաբերող հարցերին, ինչպես նաև տեղեկացնում է բանավոր փուլի անցկացման ժամի մասին:

32. Հանձնաժողովի քարտուղարը մասնակիցների թվաքանակով պատճենահանված թեստային առաջադրանքը բաժանում է մասնակիցներին (ոչ մի դեպքում մեկ այլ թեստային առաջադրանք չի տրվում), մասնակիցը թեստային առաջադրանքի վրա լրացնում է իր ազգանունը, անունը, հայրանունը և ստորագրում:

33. Թեստավորման սկիզբը հայտարարելուց հետո մասնակիցը ծանոթանում է առաջադրանքին, յուրաքանչյուր առաջադրանքի համար ընտրում է մեկ պատասխան և դրա դիմաց կատարում է համապատասխան նշում: Աշխատանքն ավարտելուց հետո առաջադրանքը հանձնում է հանձնաժողովի քարտուղարին:

34. Թեստավորման ընթացքում մասնակիցներին չի թույլատրվում աղմկել, հուշել, խոսել, հարցեր տալ ներկա գտնվող անձանց, այդ թվում՝ հանձնաժողովի անդամներին, ինչպես նաև դուրս գալ սենյակից: Եթե Մասնակիցը ցանկանում է լքել սենյակը, նրա աշխատանքը համարվում է դադարեցված:

35. Գրավոր փուլի ավարտից 15 րոպե առաջ հանձնաժողովի քարտուղարի կողմից մասնակիցները տեղեկացվում են ժամանակի մասին:

36. Առաջադրանքի համար տրվում է 120 րոպե, յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

37. Գրավոր փուլի անցումային շեմ է համարվում առաջադրանքի 100 հարցի առնվազն 90 ճիշտ պատասխանը:

38. Սխալ պատասխաններ են համարվում՝

- 1) ոչ ճիշտ պատասխան նշելը,
- 2) մեկից ավելի պատասխաններ նշելը,
- 3) ջնջումներ, ուղղումներ կամ վերականգնումներ կատարելը,

4) հարցի շարադրված պատասխաններից ոչ մեկում նշում չկատարելը:

39. Գրավոր փուլն ավարտելուց հետո թեստային առաջադրանքների ստուգման համար տրվում է 1 ժամ:

40. Ստուգված առաջադրանքի միավորի տակ ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները, իսկ անհամաձայնության դեպքում կցվում է հանձնաժողովի համապատասխան անդամի կարծիքը:

41. Հանձնաժողովի նախագահը բոլոր մասնակիցներին հրավիրում է քննասենյակ՝ գրավոր փուլի արդյունքները և մրցույթի բանավոր փուլ անցած Մասնակից(ների) անուն(ներ)ը հրապարակելու համար:

42. Գրավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո, անհամաձայնության դեպքում, դրանք կարող են բողոքարկվել հանձնաժողովին՝ 1 ժամվա ընթացքում:

43. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

44. Առաջադրանքների պատճենները, ցանկության դեպքում, կարող են տրամադրվել մասնակիցներին:

VI. ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

45. Հանձնաժողովի նախագահը մրցույթի բանավոր փուլ անցած բոլոր մասնակիցներին հրավիրում է քննասենյակ: Ցանկացողները կարող են մնալ քննասենյակում ու հետևել բանավոր փուլին մինչև ավարտը: Բանավոր փուլի ժամանակ մասնակիցը վիճակահանությամբ բանավոր առաջադրանքների հարցաշարից ընտրում է ութ հարց, որից չորսը՝ զուտ առարկայական-մասնագիտական:

46. Յուրաքանչյուր մասնակցի տրվում է մինչև 30 րոպե՝ բանավոր փուլին պատրաստվելու համար:

47. Մասնակցի կողմից հարցազրույցի հարցատոմսի հարցերի վերաբերյալ տրված պատասխանները գնահատվում են ճիշտ (2 միավոր), թերի (1 միավոր) կամ սխալ (0 միավոր)՝ Հանձնաժողովի մասնագետ անդամի կողմից:

48. Եթե մասնակցի տված պատասխանը գնահատվում է սխալ կամ թերի, ապա հանձնաժողովի՝ գնահատականը տվող անդամի կողմից պետք է հնչեցվի ճիշտ ու ամբողջական պատասխանը:

49. Մասնակիցը համարվում է բանավոր փուլի շեմը հաղթահարած, եթե ճիշտ ու ամբողջական է պատասխանել բանավոր ութ հարցից առնվազն չորսին, որից երկուսը՝ մասնագիտական առարկայից:

50. Յուրաքանչյուր Մասնակցի հետ հարցազրույցն արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից:

51. Արձանագրության մեջ ամրագրվում է յուրաքանչյուր հարցը, հարցի վերաբերյալ Մասնակցի տված պատասխանը, հանձնաժողովի համապատասխան (նշելով նրա անունը և ազգանունը) անդամի գնահատականը (ճիշտ, թերի կամ սխալ), իսկ թերի ու սխալ պատասխանի դեպքում՝ հնչեցրած ճիշտ ու ամբողջական պատասխանը:

52. Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի քարտուղարի, Մասնակցի և հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

53. Յուրաքանչյուր մասնակցի համար հարցազրույցն ավարտվելուց հետո լրացվում է անհատական թերթիկը (Ձև 3):

54. Հանձնաժողովի նախագահը բարձրաձայն բոլոր մասնակիցներին հայտարարում է բանավոր փուլի արդյունքները և եզրակացությունը, ինչն արձանագրվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից:

55. Բանավոր փուլի արդյունքները հրապարակելուց հետո, անհամաձայնության դեպքում, այն կարող է բողոքարկվել հանձնաժողովին՝ 1 ժամվա ընթացքում:

56. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը կարող է բողոքարկվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնին և (կամ) դատարան:

VII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱՎՈՒՄԸ

57. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը: Մրցույթի արդյունքների հրապարակման ամփոփիչ արձանագրության մեջ լրացվում է (Ձև 2).

- 1) մրցույթի անցկացման վայրը,
- 2) հաստատության լրիվ անվանումը,
- 3) Թափուր տեղի անվանումը,
- 4) Թափուր տեղերի քանակը,
- 5) մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը,
- 6) մրցույթին թույլատրված մասնակիցների թիվը,
- 7) գրավորի արդյունքը՝ մասնակիցների հավաքած միավորների կամ բալերի նշումով,
- 8) բանավոր փուլի մասնակիցների ցուցակը և «ճիշտ ու թերի» պատասխանների քանակը,

9) մրցույթի գրավոր և բանավոր փուլերը հաջողությամբ հաղթահարած մասնակիցների անվանացանկը և երկու փուլերի արդյունքում հավաքած ընդհանուր միավորները (գրավոր փուլի միավորին՝ ավելացրած բանավոր փուլի ճիշտ ու թերի պատասխաններով ձևավորված միավորների քանակը),

10) հանձնաժողովի անդամների ստորագրությունները,

11) մրցույթի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը:

58. Ամփոփիչ արձանագրությանը կցվում են՝

անհատական թերթիկները, հանձնաժողովի անդամների հատուկ կարծիք(ներ)ը (առկայության դեպքում):

VIII. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

59. Մրցութային հաղթող ճանաչված մասնակիցը(ները) տնօրենին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է (են) դիմում՝ աշխատանքի ընդունվելու համար. աշխատանքային պայմանագիրը կնքվում է դիմումը ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում՝ օրենքով սահմանված կարգով:

60. Եթե մրցութային հաղթող է ճանաչվել մեկից ավելի մասնակից, իսկ ներկայացված դիմումների քանակն ավելին է, քան Թափուր տեղը, Մասնակցի ընտրությունը կատարում է Տնօրենը՝ նախապատվությունը տալով ըստ առաջնահերթության.

- ա. առավելագույն միավորներ հավաքած մասնակցին (գրավոր փուլի միավորներին՝ ավելացրած բանավոր փուլի ճիշտ պատասխանների թիվը),
- բ. կրթական որակավորման աստիճանին,
- գ. մասնագիտական աշխատանքային փորձի առկայությանը,
- դ. տվյալ բնակավայրի բնակչին:

ՁեԿ

Ձև 1  
Դիմում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
ուսումնական հաստատության  
(նշվում է հաստատության լրիվ անվանումը)

(նշվում է առարկայի անվանումը) -----  
ուսուցչի թափուր պաշտոնի մրցույթին  
մասնակցելու նպատակով հաստատության տնօրեն  
պարոն/տիկին \_\_\_\_\_ - ին  
\_\_\_\_\_ - ից  
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

(դիմողի բնակության վայրը)

(դիմողի հեռ. աշխատանքային, բնակ., բջջ.)

անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել

Ծնված՝ \_\_\_\_\_  
օրը, ամիսը, տարին, վայրը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար տրված հայտարարությանը, մրցույթի պայմաններին և անցկացման կարգին՝ խնդրում եմ գրանցել ինձ որպես մրցույթի մասնակից:

Քաղաքացիությունը \_\_\_\_\_  
Դատապարտվել եմ՝ այո, ոչ (ընդգծել) \_\_\_\_\_  
Դատվածությունս հանված կամ մարված է՝ այո, ոչ (ընդգծել) \_\_\_\_\_  
Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվել եմ՝ այո, ոչ (ընդգծել) \_\_\_\_\_  
Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվել եմ՝ այո, ոչ (ընդգծել) \_\_\_\_\_

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 15-ի թիվ 301-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի որևէ հիվանդությամբ տառապում եմ, չեմ տառապում (ընդգծել) \_\_\_\_\_

Համակարգչային գրագիտությունը \_\_\_\_\_

(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)  
Կից ներկայացնում եմ մրցույթի մասին հայտարարությունում նշված փաստաթղթերը:  
Նախագրուչացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ ..... «.....»..... 20.... թ.

«Ձև 2

ԱՄՓՈՓԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության \_\_\_\_\_  
շրջանի (Ստեփանակերտ քաղաքի) \_\_\_\_\_

(ուսումնական հաստատության լրիվ անվանումը, ըստ կրթական ծրագրերի աստիճանի)  
ուսուցչի թափուր աշխատատեղի (լրացվում է մասնագիտության անվանումը)

\_\_\_\_\_ համար հայտարարված

- մրցույթի.
1. Թափուր աշխատատեղի քանակը \_\_\_\_\_
  2. Մրցույթին մասնակցելու համար դիմած անձանց թիվը \_\_\_\_\_
  3. Մրցույթին թույլատրված մասնակիցների թիվը \_\_\_\_\_
  4. Գրավոր փուլի ձևը \_\_\_\_\_
  5. Գրավոր արդյունքը (մասնակիցների անուն, ազգանունը, հավաքած միավորները կամ

- բալները)
- 1) \_\_\_\_\_
  - 2) \_\_\_\_\_
  - 3) \_\_\_\_\_

6. Բանավոր փուլի մասնակիցների ցուցակը և ճիշտ ու թերի պատասխաններով ձևավորված միավորների քանակը

- 1) \_\_\_\_\_
- 2) \_\_\_\_\_
- 3) \_\_\_\_\_

7. Մրցույթի գրավոր և բանավոր փուլերը հաջողությամբ հաղթահարած մասնակիցների անվանացանկը և երկու փուլերի արդյունքում հավաքած ընդհանուր միավորները (գրավոր փուլի միավորին՝ ավելացրած բանավոր փուլի ճիշտ ու թերի պատասխաններով ձևավորված միավորների քանակը)

- 1) \_\_\_\_\_
- 2) \_\_\_\_\_
- 3) \_\_\_\_\_

8. Հանձնաժողովի անդամների անունը, ազգանունը և ստորագրությունը՝

- 1) Հանձնաժողովի նախագահ՝ \_\_\_\_\_
  - 2) Հանձնաժողովի անդամ՝ \_\_\_\_\_
  - 3) Հանձնաժողովի անդամ՝ \_\_\_\_\_
  - 4) Հանձնաժողովի անդամ՝ \_\_\_\_\_
- ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ \_\_\_\_\_

Ձև 3

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը \_\_\_\_\_

2. Առարկան \_\_\_\_\_

3. Մասնակցի անուն, ազգանունը \_\_\_\_\_

4. Տոմսի համարը \_\_\_\_\_

5. Հարցերի գնահատականները («ճիշտ», «թերի» կամ «սխալ»)  
Մասնագիտական՝

- 1) \_\_\_\_\_
- 2) \_\_\_\_\_
- 3) \_\_\_\_\_
- 4) \_\_\_\_\_

Ընդհանուր՝

- 5) \_\_\_\_\_
- 6) \_\_\_\_\_
- 7) \_\_\_\_\_
- 8) \_\_\_\_\_

9. Ընդամենը հավաքած «ճիշտ» և «թերի» պատասխանների քանակը  
ճիշտ \_\_\_\_\_  
թերի \_\_\_\_\_

Ընդհանուր \_\_\_\_\_

10. Եզրակացություն \_\_\_\_\_  
(Հաղթահարել է բանավոր փուլը, չի հաղթահարել)

11. Հանձնաժողովի անդամների անունը, ազգանունը և ստորագրությունը

- 1) Հանձնաժողովի նախագահ՝ \_\_\_\_\_
- 2) Հանձնաժողովի անդամ՝ \_\_\_\_\_
- 3) Հանձնաժողովի անդամ՝ \_\_\_\_\_
- 4) Հանձնաժողովի անդամ՝ \_\_\_\_\_

12. Մասնակցի ստորագրությունը՝ \_\_\_\_\_  
Քարտուղար՝ \_\_\_\_\_

Ձև 4

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Աշխատանքային գործունեությունը (վերջին աշխատանքի վայրը լրացվում է առաջինը),
2. կրթությունը, մասնագիտական կրթության որակավորման աստիճանը, կրթության վկայագրերը (դիպլոմներ, հավաստագրեր, վկայականներ),

3. կոչումներ,
4. որակավորման տարակարգ,
5. հրատարակած հոդվածներ,
6. լեզուների իմացություն,
7. Համակարգչային իմացություն,
8. այլ տվյալներ:

ՄՐՑՈՒՅԹ ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Հարցաշարերը հրապարակված են «Լուսարար» պաշտոնաթերթի 2013 թվականի 25-26 և 2014 թվականի 23-24 համարներում, տեղակայված են նաև Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության edu.nkr.am կայք էջում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),
2. փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. անձնագրի պատճենը,
4. ինքնակենսագրություն (Ձև 4),
5. թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշ-

խատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. մեկ լուսանկար՝ 3ճ4 չափսի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ Արցախի Հանրապետությունում աշխատելու իրավունքը փաստող վկայագիր,
8. Արցախի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **օգոստոսի 23-ը** ներառյալ, ամեն օր՝ **ժամը 09:00-ից 15:00-ը**, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան հանրակրթական ուսումնական հաստատությունում: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան օգոստոսի 24-ից օգոստոսի 30-ն ընկած ժամանակահատվածում: Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություն:

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ

ՄՐՅՈՒՅԹ՝ ԱՐՅԱԽԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԳՊՐՈՅՆԵՐԻ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴԱՍՎԱՐ

Ստեփանակերտ

Յ. 6 հ/դ - 20 ժամ  
Յ. 8 հ/դ - 20 ժամ

Մարտակերտի շրջան

Մարտակերտի հ. 1 մ/դ - 20 ժամ  
Վերին Զոռաթաղի մ/դ - 16 ժամ  
Թալիշի մ/դ - 20 ժամ  
Մատաղիսի մ/դ - 40 ժամ  
Կիչանի և Նոր Ղազանչիի մ/դ - 12 ժամ  
Նոր Մարաղայի մ/դ-ի Նոր Զրաբերդի մ/ճ - 22 ժամ  
Մարտակերտի հ. 2 հ/դ - 20 ժամ

Մարտունու շրջան

Մարտունու հ. 1 մ/դ - 20 ժամ  
Կաղարծու մ/դ-ի Պառավաթունքի մ/ճ - 13 ժամ  
Կոլխոզաշենի մ/դ-ի Մսմնայի մ/ճ - 12 ժամ

Հաղորթի շրջան

Հաղորթի մ/դ - 40 ժամ  
Առաջամուղի մ/դ - 20 ժամ  
Քյուրաթաղի մ/դ - 37 ժամ  
Առաքելի մ/դ - 20 ժամ  
Խանձածորի մ/դ-ի Հայկավանի մ/ճ - 2 հաստիք  
Ուխտածորի մ/դ - 16 ժամ

Շուշիի շրջան

Շուշի Խ.Աբովյանի անվան մ/դ - 20 ժամ

Շահումյանի շրջան

Նոր Էրքեջի մ/դ - 20 ժամ  
Նոր Վերինշենի մ/դ - 18 ժամ

Քաշաթաղի շրջան

Գողթանիկի մ/դ - 1 հաստիք  
Բազմատուսի մ/դ - 1 հաստիք  
Մշենիի մ/դ - 1 հաստիք  
Միրիկի մ/դ - 1 հաստիք  
Հերիկի հ/դ - 2 հաստիք  
Հակի հ/դ - 1 հաստիք  
Աղանուսի մ/դ - 1 հաստիք  
Աղավնատան մ/դ - 2 հաստիք  
Հակարիի մ/դ - 1 հաստիք  
Վուրգավանի մ/դ - 1 հաստիք  
Սարատակի մ/դ - 1 հաստիք  
Քարոտանի մ/դ - 1 հաստիք  
Երիցվանքի մ/դ - 2 հաստիք

ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒ ԵՎ ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստեփանակերտ

Յ. 4 հ/դ - 12 ժամ  
Յ. 8 հ/դ - 12 ժամ  
Յ. 9 հ/դ - 12 ժամ

Ասկերանի շրջան

Հարավի մ/դ - 22 ժամ

Մարտակերտի շրջան

Մարտակերտի հ.1 մ/դ - 18 ժամ  
Գանկաթաղի մ/դ-ի Վարդածորի մ/ճ - 10 ժամ  
Նոր Սեյսուլանի մ/դ - 6 ժամ  
Մատաղիսի մ/դ - 16 ժամ

Մարտունու շրջան

Թաղավարդի մ/դ - 6 ժամ  
Կոլխոզաշենի մ/դ - 12 ժամ  
Սոսի մ/դ - 6 ժամ

Շահումյանի շրջան

Նոր Բրաջուրի մ/դ - 12 ժամ  
Նոր Էրքեջի մ/դ - 8 ժամ

Քաշաթաղի շրջան

Վարդուտի մ/դ - 12 ժամ  
Բազմատուսի մ/դ - 18 ժամ  
Դրախտածորի մ/դ - 17 ժամ  
Հակարիի մ/դ - 18 ժամ  
Միջնավանի մ/դ - 6 ժամ  
Քարեգահի մ/դ - 8 ժամ  
Ղազարապատի մ/դ - 23 ժամ  
Վակունիսի հ/դ - 8 ժամ  
Մշենիի մ/դ - 18 ժամ  
Տանձուտի հ/դ - 27 ժամ  
Ուռեկանի մ/դ - 31 ժամ  
Այգեհովիտի մ/դ - 16 ժամ  
Իշխանածորի մ/դ - 12 ժամ  
Աղածորի մ/դ - 10 ժամ  
Երիցվանքի մ/դ - 30 ժամ  
Դիցմայրիի հ/դ - 16 ժամ  
Ալաշկերտի մ/դ - 11 ժամ  
Ծղբածորի հ/դ - 15 ժամ

ՌՈՒՄԱՑ ԼԵՋՈՒ

Ստեփանակերտ

Յ. 8 մ/դ - 7 ժամ

Մարտակերտի շրջան

Մաղավուզի մ/դ - 6 ժամ  
Աղաթեկալանջի հ/դ - 9 ժամ

Մարտունու շրջան

Բերդաշենի մ/դ - 8 ժամ  
Հաղորթի շրջան  
Առաջամուղի մ/դ - 26 ժամ  
Խանձածորի մ/դ-ի Հայկավանի մ/ճ - 14 ժամ

Շուշիի շրջան

Եղցահողի մ/դ - 11 ժամ

Շահումյանի շրջան

Նոր Գետաշենի մ/դ - 18 ժամ  
Դաղիվանքի մ/դ - 11 ժամ  
Զուարի մ/դ - 10 ժամ  
Նոր Խարխափուտի մ/դ - 11 ժամ  
Հավաթաղի հ/դ - 12 ժամ  
Նոր Ղարաչինարի մ/դ - 18 ժամ  
Նոր Մանաշիղի հ/դ - 12 ժամ

Քաշաթաղի շրջան

Աղածորի մ/դ - 13 ժամ  
Դրախտածորի մ/դ - 12 ժամ  
Ծիծեռնավանքի մ/դ - 17 ժամ  
Ծղբածորի հ/դ - 9 ժամ  
Հակարիի մ/դ - 13 ժամ  
Հակի հ/դ - 11 ժամ  
Միջնավանի մ/դ - 16 ժամ  
Միրիկի մ/դ - 14 ժամ  
Մովսեսաշենի հ/դ - 8 ժամ  
Վակունիսի մ/դ - 19 ժամ  
Վարդուտի մ/դ - 14 ժամ  
Վուրգավանի մ/դ - 13 ժամ  
Քաշունիքի հ/դ - 15 ժամ  
Ղազարապատի մ/դ - 14 ժամ  
Գանձայի մ/դ - 9 ժամ  
Արվականի հ/դ - 12 ժամ  
Տանձուտի հ/դ - 13 ժամ  
Աղավնատան մ/դ - 14 ժամ  
Մարտունաշենի մ/դ - 18 ժամ  
Գետամեջի մ/դ - 10 ժամ  
Իշխանածորի մ/դ - 18 ժամ  
Փակահանի մ/դ - 19 ժամ  
Քարոտանի մ/դ - 17 ժամ  
Դիցմայրիի հ/դ - 10 ժամ  
Ալաշկերտի մ/դ - 17 ժամ

ՕՏԱՐ ԼԵՋՈՒ

Ստեփանակերտ

Յ. 3 մ/դ - 12 ժամ (անգ.) 6 ժամ (զերմ.)

Մարտակերտի շրջան

Մարտակերտի հ. 2 հ/դ - 17 ժամ (զերմ.)  
Զարդախաչի հ/դ - 8 ժամ (անգ.)  
Շահմասուրի հ/դ - 8 ժամ (անգ.)

Մարտունու շրջան

Կաղարծու մ/դ - 16 ժամ (անգ.)  
Հաղորտու մ/դ - 12 ժամ (անգ.)  
Վազգենաշենի մ/դ - 18 ժամ (անգ.)  
Մյուրիշենի հ/դ - 8 ժամ (անգ.)

Հաղորթի շրջան

Ակնաղբյուրի մ/դ - 18 ժամ (անգ.)  
Առաքելի մ/դ - 12 ժամ (անգ.)  
Մոխրեմեսի հ/դ - 8 ժամ (անգ.)  
Բանածորի հ/դ - 18 ժամ (անգ.)  
Խանձածորի մ/դ-ի Հայկավանի մ/ճ - 10 ժամ (անգ.)

Շուշիի շրջան

Լիսագորի մ/դ - 6 ժամ (անգ.)  
Մեծ շենի մ/դ - 8 ժամ (անգ.)

Շահումյանի շրջան

Նոր Գետաշենի մ/դ - 12 ժամ (անգ.)  
Դաղիվանքի մ/դ - 6 ժամ (անգ.)  
Նոր Ղարաչինարի մ/դ - 12 ժամ (անգ.)  
Նոր Մանաշիղի հ/դ - 12 ժամ (անգ.)  
Զարեքտարի մ/դ - 16 ժամ (անգ.)  
Զուարի մ/դ - 10 ժամ (ֆրանս.)

Քաշաթաղի շրջան

Կովսականի մ/դ - 8 ժամ (ֆրանս.)  
Այգեհովիտի մ/դ - 11 ժամ (անգ.)  
Արծվաշենի մ/դ - 10 ժամ (անգ.)  
Աղանուսի մ/դ - 6 ժամ (անգ.)  
Արտաշավիի մ/դ - 12 ժամ (անգ.)  
Բազմատուսի մ/դ - 8 ժամ (անգ.)

Ծղբածորի հ/դ - 6 ժամ (անգ.)  
Հակարիի մ/դ - 8 ժամ (անգ.)  
Ղազարապատի մ/դ - 10 ժամ (անգ.)  
Մովսեսաշենի հ/դ - 6 ժամ (անգ.)  
Մշենիի մ/դ - 6 ժամ (անգ.)  
Սոնասարի մ/դ - 6 ժամ (անգ.)  
Վակունիսի մ/դ - 11 ժամ (անգ.)  
Վարդուտի մ/դ - 9 ժամ (անգ.)  
Վանի մ/դ - 16 ժամ (անգ.)  
Տանձուտի հ/դ - 10 ժամ (անգ.)  
Փակահանի մ/դ - 12 ժամ (անգ.)  
Քաշունիքի հ/դ - 8 ժամ (անգ.)  
Գողթանիկի մ/դ - 11 ժամ (անգ.)  
Դրախտածորի հ/դ - 8 ժամ (անգ.)  
Շալուայի մ/դ - 6 ժամ (անգ.)  
Աղավնոյի մ/դ - 14 ժամ (անգ.)  
Ծիծեռնավանքի մ/դ - 12 ժամ (անգ.)  
Միրիկի մ/դ - 14 ժամ (անգ.)  
Հերիկի մ/դ - 11 ժամ (անգ.)  
Հակի հ/դ - 7 ժամ (անգ.)  
Աղավնատան մ/դ - 9 ժամ (անգ.)  
Վուրգավանի մ/դ - 8 ժամ (անգ.)  
Մարտունաշենի մ/դ - 14 ժամ (անգ.)  
Տիգրանավանի մ/դ - 12 ժամ (անգ.)  
Գետամեջի մ/դ - 8 ժամ (անգ.)  
Քարոտանի մ/դ - 12 ժամ (անգ.)  
Ալաշկերտի մ/դ - 16 ժամ (անգ.)

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Ստեփանակերտ

Յ. 3 մ/դ - 15 ժամ  
Յ. 11 ա/դ - 28 ժամ

Ասկերանի շրջան

Հարավի մ/դ - 18 ժամ  
Նախիջևանիկի մ/դ - 14 ժամ  
Խնապատի մ/դ - 12 ժամ

Մարտակերտի շրջան

Մարտակերտի հ.1 մ/դ - 6 ժամ  
Թալիշի մ/դ - 8 ժամ  
Մոխրաթաղի մ/դ - 6 ժամ  
Գանկաթաղի մ/դ-ի Վարդածորի մ/ճ - 10 ժամ  
Մատաղիսի մ/դ - 18 ժամ  
Կիչանի և Նոր Ղազանչիի մ/դ - 18 ժամ  
Նոր Մարաղայի մ/դ-ի Նոր Զրաբերդի մ/ճ - 22 ժամ  
Մաղավուզի մ/դ - 28 ժամ  
Մեծ շենի մ/դ - 6 ժամ  
Նոր Մարաղայի մ/դ - 21 ժամ  
Նոր Այգեստանի մ/դ - 14 ժամ  
Աղաթեկալանջի հ/դ - 10 ժամ

Մարտունու շրջան

Շենիերի մ/դ - 12 ժամ  
Զիվանիի մ/դ - 22 ժամ

Հաղորթի շրջան

Տունու մ/դ - 28 ժամ  
Արևատի մ/դ - 22 ժամ  
Հակակուլի հ/դ - 9 ժամ  
Մարիամածորի մ/դ - 15 ժամ

Շուշիի շրջան

Եղցահողի մ/դ - 12 ժամ

Շահումյանի շրջան

Զուարի մ/դ - 15 ժամ  
Դաղիվանքի մ/դ - 6 ժամ  
Նոր Խարխափուտի մ/դ - 15 ժամ  
Նոր Ղարաչինարի մ/դ - 20 ժամ  
Նոր Մանաշիղի հ/դ - 19 ժամ  
Զարեքտարի մ/դ - 24 ժամ

Քաշաթաղի շրջան

Սոնասարի մ/դ - 10 ժամ  
Բազմատուսի մ/դ - 22 ժամ  
Տանձուտի հ/դ - 21 ժամ  
Այգեհովիտի մ/դ - 20 ժամ  
Երիցվանքի մ/դ - 21 ժամ  
Դիցմայրիի հ/դ - 13 ժամ  
Բերձորի մ/դ - 22 ժամ  
Դրախտածորի մ/դ - 6 ժամ  
Վակունիսի մ/դ - 23 ժամ  
Մովսեսաշենի հ/դ - 8 ժամ  
Արվականի հ/դ - 15 ժամ  
Ծիծեռնավանքի մ/դ - 20 ժամ  
Լեռնահովիտի մ/դ - 18 ժամ  
Հակարիի մ/դ - 15 ժամ  
Վուրգավանի մ/դ - 6 ժամ  
Իշխանածորի մ/դ - 25 ժամ



ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐ

Փակահանի մ/դ - 15 ժամ  
Քարտանի մ/դ - 22 ժամ  
Ալաշկերտի մ/դ - 7 ժամ

**ՖԻԶԻԿԱ**

**Ասկերանի շրջան**

Ազնեքի մ/դ - 6 ժամ  
Պատարայի մ/դ - 7 ժամ  
**Մարտակերտի շրջան**  
Ներքին Հոռաթաղի մ/դ - 6 ժամ  
Թալիշի մ/դ - 10 ժամ  
Մոխրաթաղի մ/դ - 12 ժամ  
Քոլատակի մ/դ - 11 ժամ  
Նոր Հայկաջուրի հ/դ - 6 ժամ  
Նոր Մարաղայի մ/դ - 15 ժամ  
**Մարտունու շրջան**  
Կաղարծու մ/դ - 12 ժամ  
Շեխերի մ/դ - 14 ժամ  
Վազգենաշենի մ/դ - 14 ժամ  
Ճարտարի հ. 5 մ/դ - 7 ժամ  
Թաղավարդ Կալեդի հ/դ - 6 ժամ

**Հաղրուքի շրջան**

Դրախտիկի մ/դ - 11 ժամ  
Բանաձորի հ/դ - 9 ժամ  
Հակակուլի հ/դ - 14 ժամ  
Արևշատի մ/դ - 14 ժամ  
Խժաբերդի հ/դ - 7 ժամ  
Խանձաձորի հ/դ - 9 ժամ

**Շուշիի շրջան**

Եղցահողի մ/դ - 6 ժամ  
**Շահումյանի շրջան**  
Նոր Բրաջուրի մ/դ - 12 ժամ  
Նոր Ղարաչինարի մ/դ - 8 ժամ  
Նոր Մանաշիղի հ/դ - 7 ժամ  
Չարեքտարի մ/դ - 9 ժամ  
Զուարի մ/դ - 7 ժամ

**Քաշաթաղի շրջան**

Սուսի մ/դ - 7 ժամ  
Աղավնոյի մ/դ - 9 ժամ  
Ուռեկանի մ/դ - 12 ժամ  
Տիգրանավանի մ/դ - 7 ժամ  
Արծվաշենի մ/դ - 10 ժամ  
Աղածորի մ/դ - 6 ժամ  
Դիցմայրիկի հ/դ - 6 ժամ  
Քարեգահի մ/դ - 7 ժամ  
Վակունիսի մ/դ - 6 ժամ  
Ծիծեռնավանքի մ/դ - 6 ժամ  
Տանձուտի հ/դ - 9 ժամ  
Հերիկի մ/դ - 8 ժամ  
Հակարիկի մ/դ - 7 ժամ  
Այգեհովիտի մ/դ - 10 ժամ  
Իշխանաձորի մ/դ - 14 ժամ  
Քարտանի մ/դ - 9 ժամ  
Կովսականի մ/դ - 7 ժամ  
Ալաշկերտի մ/դ - 9 ժամ

**ՔԻՄԻԱ**

**Ստեփանակերտ**

Հ. 8 հ/դ - 6 ժամ  
**Մարտակերտի շրջան**  
Հաթերքի մ/դ - 6 ժամ  
Կոճողոտի մ/դ - 8 ժամ  
Նոր Սեյսուլանի մ/դ - 9 ժամ  
Կիչանի և Նոր Ղազանչիի մ/դ - 10 ժամ

**Մարտունու շրջան**

Կոլխոզաշենի մ/դ - 8 ժամ  
**Հաղրուքի շրջան**  
Տունու մ/դ - 10 ժամ  
Մարիամաձորի մ/դ - 10 ժամ  
Խանձաձորի հ/դ - 6 ժամ

**Շուշիի շրջան**

Եղցահողի մ/դ - 6 ժամ  
Մեծ շենի մ/դ - 6 ժամ

**Շահումյանի շրջան**

Նոր Երքեջի մ/դ - 6 ժամ

**Քաշաթաղի շրջան**

Մարտունաշենի մ/դ - 8 ժամ  
Այգեհովիտի մ/դ - 6 ժամ  
Արծվաշենի մ/դ - 6 ժամ  
Ղազարապատի մ/դ - 6 ժամ  
Գողթանիկի մ/դ - 6 ժամ  
Մոշաթաղի մ/դ - 9 ժամ  
Լեռնահովիտի մ/դ - 7 ժամ  
Տիգրանավանի մ/դ - 7 ժամ  
Քարտանի մ/դ - 6 ժամ  
Վանի մ/դ - 7 ժամ

**ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Մարտակերտի շրջան**

Չլդրանի մ/դ - 10 ժամ  
Զարդախաչի հ/դ - 6 ժամ  
**Մարտունու շրջան**  
Կոլխոզաշենի մ/դ - 10 ժամ  
**Հաղրուքի շրջան**  
Խանձաձոր մ/դ - 6 ժամ  
Խանձաձորի մ/դ-ի Հայկավանի մ/դ - 6 ժամ

**Շուշիի շրջան**

Եղցահողի մ/դ - 6 ժամ

**Շահումյանի շրջան**

Նոր Երքեջի մ/դ - 8 ժամ  
Ղաղիվանքի մ/դ - 6 ժամ

**Քաշաթաղի շրջան**

Մարտունաշենի մ/դ - 8 ժամ  
Այգեհովիտի մ/դ - 7 ժամ  
Արծվաշենի մ/դ - 9 ժամ  
Վանի մ/դ - 8 ժամ  
Վարդուտի մ/դ - 6 ժամ  
Վակունիսի մ/դ - 6 ժամ  
Ղազարապատի մ/դ - 6 ժամ  
Գողթանիկի մ/դ - 6 ժամ  
Բազմատուսի մ/դ - 8 ժամ  
Դրախտաձորի հ/դ - 6 ժամ  
Ծիծեռնավանքի մ/դ - 6 ժամ  
Հերիկի մ/դ - 6 ժամ  
Լեռնահովիտի մ/դ - 7 ժամ  
Ուռեկանի մ/դ - 10 ժամ  
Տիգրանավանի մ/դ - 7 ժամ  
Քաշունիքի հ/դ - 6 ժամ  
Քարտանի մ/դ - 6 ժամ  
Մոշաթաղի մ/դ - 11 ժամ

**ՆՋՊ**

**Ստեփանակերտ**

Հ. 5 հ/դ - 1 հաստիք  
Հ. 10 հ/դ - 1 հաստիք

**Ասկերանի շրջան**

Այգեստանի մ/դ - 1 հաստիք  
Խնածախի մ/դ - 1 հաստիք

**Մարտակերտի շրջան**

Հաթերքի մ/դ - 1 հաստիք  
Ներքին Հոռաթաղի մ/դ - 1 հաստիք  
Կոճողոտի մ/դ - 1 հաստիք  
Մաղավուզի մ/դ - 1 հաստիք  
Չափարի մ/դ - 1 հաստիք  
Մարտակերտի հ. 2 հ/դ - 1 հաստիք

**Շուշիի շրջան**

Հին շենի մ/դ - 0,5 հաստիք

**Շահումյանի շրջան**

Քարվաճառի մ/դ - 1 հաստիք  
Նոր Բրաջուրի մ/դ - 1 հաստիք  
Նոր Գետաշենի մ/դ - 1 հաստիք  
Ղաղիվանքի մ/դ - 0,5 հաստիք  
Հավաթաթաղի հ/դ - 0,5 հաստիք

**Քաշաթաղի շրջան**

Մովսեսաշենի մ/դ - 0,5 հաստիք,  
Քաշունիքի հ/դ - 0,5 հաստիք  
Դրախտաձորի հ/դ - 0,5 հաստիք  
Շալուայի մ/դ - 0,5 հաստիք  
Հոջանցի հ/դ - 0,5 հաստիք  
Սոճասարի մ/դ - 0,5 հաստիք  
Աղավնոյի մ/դ - 1 հաստիք  
Մոշաթաղի մ/դ - 1 հաստիք  
Հերիկի հ/դ - 0,5 հաստիք  
Հակի հ/դ - 0,5 հաստիք  
Աղավնատան մ/դ - 0,5 հաստիք  
Հակարիկի մ/դ - 0,5 հաստիք  
Վուրգավանի մ/դ - 0,5 հաստիք  
Մարտունաշենի մ/դ - 1 հաստիք  
Տիգրանավանի մ/դ - 1 հաստիք  
Ալաշկերտի մ/դ - 1 հաստիք  
Կերենի մ/դ - 0,5 հաստիք

**ԻՆՅՈՐՄԱՏԻԿԱ**

**Ստեփանակերտ**

Հ. 6 հ/դ - 7 ժամ  
**Հաղրուքի շրջան**  
Ակնաղբյուրի մ/դ - 7 ժամ  
Ուխտաձորի մ/դ - 7 ժամ

**Մարտունու շրջան**

Մարտունու հ. 1 մ/դ - 10 ժամ  
Մաճկալաշենի մ/դ - 6 ժամ  
Շեխերի մ/դ - 7 ժամ  
Սպիտակաշենի մ/դ - 7 ժամ  
Ճարտարի հ. 5 մ/դ - 7 ժամ

**Մարտակերտի շրջան**

Մաղավուզի մ/դ - 7 ժամ  
Մատաղիսի մ/դ - 8 ժամ  
Նոր Այգեստանի մ/դ - 6 ժամ  
Քոլատակի մ/դ - 6 ժամ

**Շահումյանի շրջան**

Նոր Վերին շենի մ/դ - 6 ժամ

**Քաշաթաղի շրջան**

Միջնավանի մ/դ - 6 ժամ  
Բերձորի հ. 2 մ/դ - 7 ժամ  
Ուռեկանի մ/դ - 6 ժամ  
Իշխանաձորի մ/դ - 7 ժամ  
Կովսականի մ/դ - 7 ժամ  
Երիցվանքի մ/դ - 6 ժամ

**ԿԵՐՊԱՐՎԵՍ**

**Ստեփանակերտ**

Հ. 8 մ/դ - 6 ժամ

**Մարտակերտի շրջան**

Մարտակերտի հ. 1 մ/դ - 6 ժամ

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ**

**Հաղրուքի շրջան**

Տունու մ/դ - 7 ժամ  
Առաջամուղի մ/դ - 6 ժամ

**Մարտակերտի շրջան**

Նոր Սեյսուլանի մ/դ - 6 ժամ

**Քաշաթաղի շրջան**

Կովսականի մ/դ - 7 ժամ  
Միջնավանի մ/դ - 7 ժամ

**ՊԱՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Հաղրուքի շրջան**

Զրակուսի մ/դ - 16 ժամ  
Խժաբերդի հ/դ - 9 ժամ

**Մարտակերտի շրջան**

Մատաղիսի մ/դ - 15 ժամ  
Շահմասուրի հ/դ - 6 ժամ  
Աղաբեկալանցի հ/դ - 10 ժամ

**Մարտունու շրջան**

Աշանի մ/դ - 8 ժամ  
Ճարտարի հ. 5 մ/դ - 8 ժամ

**Շուշիի շրջան**

Լիսագորի մ/դ - 10 ժամ

**Շահումյանի շրջան**

Նոր Բրաջուրի մ/դ - 21 ժամ  
Զուարի մ/դ - 22 ժամ  
Նոր Ղարաչինարի մ/դ - 6 ժամ

**Քաշաթաղի շրջան**

Արվականի մ/դ - 12 ժամ  
Բազմատուսի մ/դ - 18 ժամ  
Վակունիսի մ/դ - 6 ժամ  
Տանձուտի հ/դ - 14 ժամ  
Դրախտաձորի հ/դ - 15 ժամ  
Հոջանցի հ/դ - 12 ժամ  
Մշենիի մ/դ - 10 ժամ  
Սոճասարի մ/դ - 9 ժամ  
Հերիկի հ/դ - 17 ժամ  
Աղավնատան մ/դ - 18 ժամ  
Հակարիկի մ/դ - 9 ժամ  
Ծաղկաբերդի մ/դ - 22 ժամ  
Վուրգավանի մ/դ - 11 ժամ  
Իշխանաձորի մ/դ - 15 ժամ  
Արծվաշենի հ/դ - 15 ժամ  
Կովսականի մ/դ - 8 ժամ  
Կերենի մ/դ - 9 ժամ

**ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Հաղրուքի շրջան**

Խժաբերդի հ/դ - 6 ժամ  
Քուրաթաղի մ/դ - 9 ժամ  
Խանձաձորի մ/դ-ի Հայկավանի մ/դ - 7 ժամ

**Մարտունու շրջան**

Գիշու մ/դ - 10 ժամ  
Մաճկալաշենի մ/դ - 10 ժամ

**Մարտակերտի շրջան**

Մատաղիսի մ/դ - 1 0 ժամ  
Թալիշի մ/դ - 8 ժամ

**Շահումյանի շրջան**

Նոր Բրաջուրի մ/դ - 8 ժամ  
Նոր Գետաշենի մ/դ - 6 ժամ  
Նոր Երքեջի մ/դ - 8 ժամ  
Նոր Մանաշիղի հ/դ - 7 ժամ  
Չարեքտարի մ/դ - 6 ժամ

**Քաշաթաղի շրջան**

Ծիծեռնավանքի մ/դ - 6 ժամ  
Հերիկի մ/դ - 6 ժամ

Մարտակերտի մ/դ - 8 ժամ  
Վարդուտի մ/դ - 6 ժամ  
Տանձուտի հ/դ - 6 ժամ  
Տիգրանավանի մ/դ - 7 ժամ  
Վակունիսի հ/դ - 6 ժամ  
Մոշաթաղի մ/դ - 11 ժամ  
Վուրգավանի մ/դ - 6 ժամ  
Ուռեկանի մ/դ - 9 ժամ  
Մարտունաշենի մ/դ - 9 ժամ  
Իշխանաձորի մ/դ - 10 ժամ  
Քարտանի մ/դ - 6 ժամ  
Երիցվանքի մ/դ - 9 ժամ  
Ալաշկերտի մ/դ - 7 ժամ  
Վանի մ/դ - 18 ժամ

**ԵՐԳ**

**Մարտակերտի շրջան**

Մարտակերտի հ. 1 մ/դ - 6 ժամ  
Հաթերքի մ/դ - 11,5 ժամ

**Հաղրուքի շրջան**

Մարիամաձորի մ/դ - 8 ժամ

**ՏԵՆՆՈՒՈՂԻԱ**

**Մարտակերտի շրջան**

Պողոսագոմեթի մ/դ - 6 ժամ

**ՖԻԶԿՈՒՄՍՏՐՈՒԿ**

**Մարտակերտի շրջան**

Մարտակերտի հ. 1 մ/դ - 6 ժամ  
Հաթերքի մ/դ - 12 ժամ  
Թալիշի մ/դ - 18 ժամ  
Կուսապատի մ/դ - 21 ժամ  
Մատաղիսի մ/դ - 23 ժամ  
Աղաբեկալանցի հ/դ - 6 ժամ

**Հաղրուքի շրջան**

Հաղրուքի մ/դ - 20 ժամ

**Շուշիի շրջան**

Հին շենի մ/դ - 9 ժամ

**Շահումյանի շրջան**

Նոր Խարխափուտի հ/դ - 9 ժամ  
Նոր Երքեջի մ/դ - 15 ժամ  
Նոր Գետաշենի մ/դ - 12 ժամ  
Չարեքտարի մ/դ - 18 ժամ  
Վերինշենի մ/դ - 19 ժամ

**Քաշաթաղի շրջան**

Գետամեջի մ/դ - 12 ժամ  
Վանի մ/դ - 20 ժամ  
Քարեգահի մ/դ - 15 ժամ  
Վարդուտի մ/դ - 12 ժամ  
Բազմատուսի մ/դ - 9 ժամ  
Դրախտաձորի հ/դ - 9 ժամ  
Վակունիսի հ/դ - 14 ժամ  
Շալուայի մ/դ - 6 ժամ  
Մովսեսաշենի հ/դ - 7 ժամ  
Մշենիի մ/դ - 9 ժամ  
Սոճասարի մ/դ - 6 ժամ  
Աղավնոյի մ/դ - 15 ժամ  
Միրիկի մ/դ - 15 ժամ  
Հերիկի հ/դ - 12 ժամ  
Հակի հ/դ - 7 ժամ  
Աղանուսի մ/դ - 9 ժամ  
Աղավնատան մ/դ - 10 ժամ  
Վուրգավանի մ/դ - 11 ժամ  
Տիգրանավանի մ/դ - 15 ժամ  
Այգեհովիտի մ/դ - 10 ժամ  
Փակահանի մ/դ - 12 ժամ  
Քարտանի մ/դ - 12 ժամ  
Երիցվանքի մ/դ - 18 ժամ  
Կովսականի մ/դ - 23 ժամ  
Միջնավանի մ/դ - 21 ժամ  
Ալաշկերտի մ/դ - 18 ժամ

**ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՈՒ**

**Ստեփանակերտ**

Հ. 3 մ/դ - 6 ժամ

**Մարտակերտի շրջան**

Մարտակերտի հ. 2 հ/դ - 17 ժամ  
Շահմասուրի հ/դ - 8 ժամ

**ՄԱՆԿԱՊՐՏԵԶՆԵՐ**

**ՊԱՏԻՎԱՐԿ**

**Ասկերանի շրջան**

Պատարայի մանկապարտեզ - 0,5 հաստիք  
Ակնաղբյուրի մանկապարտեզ - 1 հաստիք  
**Շահումյանի շրջան**  
Եղեգնուտի մանկապարտեզ - 1 հաստիք

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՀՈՒՆՉՔ

1916 թվականի դեկտեմբերի 30-ին թիֆլիսում Չայ գրողների կովկասյան ընկերության կազմակերպած երեկոյին երիտասարդ գրականագետ Չարոյանը Սուրխաթյանը հանդես է եկել «Ռուսահայ նորագույն բանաստեղծությունը» թեմայով դասախոսությամբ: Ապա ելույթ է ունեցել Չոլիանցն «Թունանյանը» իր խոսքն ուղղելով սկսման բանաստեղծներին: Մեծ Լոռեցին ընդգծել է, որ այդ ահավոր աղետի օրերին ժողովուրդը ոգևորությամբ է խառնվում գրական երեկոներին, մտածում ազգային գրականությունը պաշտպանելու մասին: Հանճարեղ բանաստեղծն անդրադարձել է նաև գրական քննադատությանը՝ մատնանշելով, որ նոր են և քննադատները, որ խոսում են սկսմանների հետ:

Հանճարեղ բանաստեղծը քննադատների վերաբերմունքը համարում է նորություն մեր գրականության մեջ, որոնք իրենց քննադատական մեթոդով հարգալից վերաբերմունք են ցուցաբերում երիտասարդ ստեղծագործողների հանդեպ: Մեծ Լոռեցին իր ելույթում ընդգծել է. «Հարկավ, նրանք կարող են սխալվել իրենց գնահատականների մեջ, բայց նոր ու շիտակ է նրանց ծանապարհը: Դուք էլ ուշադիր ու հարգանքով լսեցեք նրանց, օգտվեցեք նրանց դիտողություններից» (Հ. Թունանյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 4, «Հայաստան» հրատ., 1969, էջ 279-280):

Դժվար չէ նկատել գրական քննադատության վերաբերյալ Մեծ Լոռեցու դրական կարծիքը՝ հաստատելով համաշխարհային մեծերի խորհուրդն այն մասին, որ առանց առողջ քննադատության գրականությունը զարգանալ չի կարող:

Վերընթերցելով Հ. Թունանյանի վերը նշյալ իմաստուն խոսքը՝ վերհիշեցի Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտի տարիները, երբ իր խոսքն ասաց նաև մեր գրականությանը՝ 1991 թվականից սկզբնավորելով անկախության շրջանի հայ գրականության պատմությունը: Արցախում ստեղծվեց հայրենասիրական մարտաշունչ պոեզիա, որի նշանակությունը բարձր գնահատվեց մերօրյա գրական քննադատների կողմից և այսօր էլ շարունակում է մնալ գրական նոր սերնդի ուշադրության կենտրոնում: Այս առումով առանձնապես նկատելի է բանասիրական գիտությունների թեկնածու, «Գրիգոր Նարեկացի» պետական տարածարժեքի համալսարանի հայոց լեզվի և գրականության մամբիոնի ավագ դասախոս Ամալյա Գրիգորյանի բեղմնավոր աշխատանքը: 2015թ. ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն՝ «Ազգային-ազատագրական պայքարի արտացոլումն արցախյան պոեզիայում» թեմայով՝ նա գրական կյանք մտավ թեկնածուի գիտական աստիճանով: Սակայն Ամալյան չհանճարեց գիտական աստիճանի վկայական ստանալով: Նա գրականագիտության ասպարեզ մտավ արարումի նոր եռանդով ու ծարավով: Երեք տարվա ընթացքում ընթերցողի սեղանին դրեց գրականագիտական երեք ժողովածու: Նրա երրորդ գիրքը «Բառը ժամանակի զուգահեռականներում», բավականին հետաքրքիր ու բովանդակալից ժողովածուն է: Հետաքրքիր այն առումով, որ երիտասարդ գրականագետը հանդես է գալիս իր գրական հայացքները հստակ ներկայացնող հոդվածներով ու երկխոսությամբ, բովանդակալից այն տեսանկյունից, որ թե՛ հոդվածներում և թե՛ «Սարինյանի ֆենոմենը: Ամալյա Գրիգորյան-Վարդան Հակոբյան» երկխոսության մեջ արծարծված են գրականության պատմության, գրական քննադատության, գրականության տեսության այնպիսի հիմնախնդիրներ, որոնք ունեն գոր-

ծառական նշանակություն բոլոր ժամանակների համար:

Գիրքը խմբագրել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու, տաղանդավոր գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանը:

Լայն են Ա. Գրիգորյանի գրական հետաքրքրությունների շրջանակները: Այսպես, վերլուծելով ու գնահատելով գրող-լրագրող Սուրեն Սարունյանի «Աբու Բաքր ալ-Բաղդադին» Շամի խալիֆը» վեպը՝ երիտասարդ գրականագետը դրսևորում է իր հաստատուն գիտելիքները քաղաքական վեպի ստեղծման պահանջների ու գեղարվեստական առանձնահատկությունների վերաբերյալ: Համոզիչ փաստարկումներով բացելով քննարկվող երկի թեմատիկ-գաղափարական հիմքը և գեղարվեստական առանձնահատկությունները՝ Ա. Գրիգորյանը նկատում է. «Ս. Սարունյանը, ինչպես ասում են, ակնարկային նյութը բարձրացնում է գեղարվեստական մակարդակի՝ հավատարիմ մնալով փաստերի հավաստիությանն ու դեպքերի հաջորդականությանը: Քաջատեղյակ լինելով պատերազմական իրադարձությունների զարգացումներին՝ նա համարձակորեն գեղարվեստական հետևությունների է հանգում, հարկ եղած դեպքում դիմում ռազմական գիտաբանների (տերմինների): Ձիմատեսակների անվանումները, տեղանունները, անձնանունները, օտարաբանությունները, ի վերջո, նպաստում են վեպում ծավալվող գործողությունների ընդհանուր ֆոնի ստեղծմանը, գեղարվեստական խոսքն ու պատկերները դարձնում համոզիչ» (Ա. Գրիգորյան, Բառը ժամանակի զուգահեռականներում, Ստեփանակերտ, «Դպրատուն» հրատ., 2018, էջ 9): Միայն այս հատվածը բավական է՝ հաստատելու երիտասարդ գրականագետի մասնագիտական հասունությունն ու արտահայտվելու կարողությունը:

Ա. Գրիգորյանի գրաքննադատական դիպլոմի դիտարկումների ու բառ-պատկերների շերտերը տեսնելու խոսուն օրինակներից է «Զգայական պատկեր» հոդվածը՝ նվիրված բանաստեղծ-արձակագիր Կիմ Գաբրիելյանի քննարկության գնահատմանը: Այստեղ կարևորում ենք այն երևույթը, որ Ա. Գրիգորյանը բանաստեղծական երկերը վերլուծելու և արժևորելու համար արհեստակցորեն չի դիմում ակադեմիական հերթապահ հասկացությունների: Նա սրտի ու հոգու աջբերով ամենատեսությամբ թափանցում է քնարական ստեղծագործությունների ծիածանագույն շերտերը և կոնկրետ հատվածների մեջբերումով շեշտում բանաստեղծի պատկերավոր մտածողության, զգացմունքային ասպրումի, պահի ընդգրկման, մարդկային տարբեր հոգեվիճակների, հոգեխռով մտորումների, լեզվարտահայտչական միջոցների առկայությունն ու կոմպոզիցիոն տարբեր միջոցների ու ձևերի օգտագործումը:

Հաճույքով ընդգծենք, որ մեր գրական ընտանիքի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ Կիմ Գաբրիելյանի պոետական արվեստի մասին առաջին անգամն է գրվում ման նրբանկատությամբ ու համոզականությամբ:

Ամերիկահայ գրող, մատենագետ, թարգմանիչ, ազգային-հասարակական գործիչ Հովսեփ Նալբանդյանի մասին գրած «Մեսրոպյան գրերը և հայապահպանության խնդիրը սփյուռքում» հոդվածը հայրենասիրական երկշերտ բնույթ ունի: Մի կողմից, ինչպես վկայակոչում է Ամալյան, գնահատվում է անվանի հայրողու նվիրումը մայր ժողովրդի հայկածին ճակատագրի հարատևման գործին, մյուս կողմից, անմիջականորեն նկատ-

վում է գրականագետ արցախուհու հրճվածքն ու գոհունակությունն այն բոլոր գործառնությունների հանդեպ, որոնք ուղղված են Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդմանն ու հարատևմանը: Ասել է թե՛ Ամալյան հարազատ դատեր սրտացավով է քննարկում քաղաքական նշանակություն ունեցող մշակութային գործընթացը: Ինչպես տեսնում ենք, չի հնացել ռուս դասական պոետ-գիպի հսկա Ա. Նեկրասովի «Նախ քաղաքացի, ապա՝ պոետ» համաժամանակյա խորհուրդը: Վերհիշենք նաև անմոռանալի Սիլվա Կապուտիկյանի նկատառումը, որ Արցախում ապրող ու ստեղծագործող մտավորականը նաև սահմանապահ-քաղաքագետ է: Այս մասին է խոսում նաև Ա. Գրիգորյանի «Արցախյան շարժման տարեգիրը» հոդվածը, որտեղ հեղինակը հարազատի ներքին հպարտությամբ է խոսում տաղանդավոր արձակագիր, հրապարակախոս Բակուր Կարապետյանի գեղարվեստական և հրապարակախոսական երկերի մասին՝ կոնկրետ արձագանքելով գրողի «...Եվ նրա շուրջը» երկին: Գրքի կոնկրետ դիտարկումը վերածվում է Արցախյան ազգային-ազատագրական պայքարի մասին անհրաժեշտ տեղեկատվության հայ ժողովրդի ու նրա նվիրյալ զավակների մղած պատմական գոյամարտի մասին: Ամալյան կարևոր է համարում ընդգծելու Բ. Կարապետյանի խիզախությունը. «Բակուր Կարապետյանը, վտանգելով իր կյանքը, անձամբ մեկնել է Սումգայիթ՝ ճշմարտությունը բացահայտելու համար: Նա իր գրքում ներկայացնում է սումգայիթյան ռժրագործության գոհ դարձած ու հրաշքով փրկված ակամատեսների հետ ունեցած հարցազրույցները, սարսափազդու պատմությունները: Ամալյան գտնում է, և ճիշտ է վարվում, որ այս առումով անգնահատելի է գրքի արժեքը: Ուստի բանիմացությամբ ընդհանրացնում է. «Բ. Կարապետյանի «...Եվ նրա շուրջը» գիրքը հիրավի, մեր Շարժման տարեգրության լավագույն էջերից է, և եզակի է, մանավանդ, այդ գրքի աղբյուրագիտական նշանակությունը սերունդների համար» (էջ 28):

Ոչ միայն պոեզիայի, այլև գրականագիտության ասպարեզում նա, ով չի որոնում, չի գտնում: Գտնումի հաճույքը, սակայն, առնչված է քրտնաթոր աշխատասիրության հետ: Ծանոթանալով Ա. Գրիգորյանի «Արիստոտելի չինացող դասերը. «Պոետիկա» գիտական հոդվածին՝ ուրախանալու հետ մեկտեղ համոզվում են, որ Ա. Գրիգորյանը հանգել է մի ճշմարտության. որ առանց գրականագիտական մտքի պատմական զարգացման նվաճումները յուրացնելու հնարավոր չէ բանիմաց մասնագետ դառնալ: Այդ համոզման դրսևորումներից են նաև «Գրականության դերը գիտակրթական համակարգում», «Սերունդների մեջ ազգային բնավորության առանձնահատուկ գծերի վերարտադրությունը գրականության միջոցով կամ հայկական ֆենոմենոլոգիա», «Անդրադարձ Եղիշե Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությանը» աշխատանքները:

Ինչ վերաբերում է գրքում գետեղված՝ «Վարդան Հակոբյանի «Կենդանի պատ» հերոսապատումը և նրա գեղարվեստական ու փիլիսոփայական ընդհանրացումները» և «Ազգային ոգու կերպավորման արվեստն ու մաքառման փիլիսոփայությունը» հոդվածներին, կարող ենք վստահորեն բարձրաձայնել, որ Ա. Գրիգորյանը մերօրյա գրաքննադատության ակտիվ ու բանիմաց մասնագետներից է, որի ուշադրության կենտրոնում է ժամանակակից գրականության զարգացման ընթացքը: Իսկ այդ ընթացքի առաջատար դեմքը Վ. Հակոբյանն է, որի նոր երկերի քննարկմանն

ու արժևորմանն էլ հենց նվիրված են այդ հատուն գրախոսությունները:

Ա. Գրիգորյանի սույն ժողովածուի առյուծի բաժինը «Սարինյանի ֆենոմենը. Ամալյա Գրիգորյան-Վարդան Հակոբյան» խորագրով երկխոսությունն է:

Հարցազրույցը դասական լուրջ ժանրերից է: Պահանջվում են երկխոսության երկու կողմերի մասնագիտական հմտությունը, քննարկվող հիմնահարցերի պատմական ընթացքի խորիմացություն, միաժամանակ՝ անկողմնակալություն, ազնվություն, արդարամտություն, մշակույթի զարգացման ազգային շահերի պաշտպանություն և այլն: Այս պահանջների համապատկերին ընթերցելով վերոնշյալ երկխոսությունը՝ ապրում են նախ գոհունակության զգացում և ապա մասնագիտական ամենախիտ վերաբերմունքի լույսի տակ ողջունում մի այնպիսի հարցազրույց, որն ընթանում է իբրև բազմապլան-բնութագրող, պահանջվող- ուսուցանող, մերօրյա-համաժամանակյա նշանակություն ունեցող դաս:

Ժողովածուի խմբագիր Արքմենիկ Նիկողոսյանը մուտքի խոսքում նշել է. «Սարինյանի ֆենոմենը» երկխոսությունը Վարդան Հակոբյանի հետ, որքան էլ վերաբերում է Սերգեյ Սարինյանի գիտական ու մարդկային որակներն ու հատկանիշները հուշերգային վերապրումով արժևորելուն և այդ համատեքստում Վարդան Հակոբյանի քննարկության գեղագիտական ու գաղափարական յուրահատկությունների նորովի բացահայտմանը, այնուամենայնիվ, լավագույնս ի ցույց է դնում նաև Ամալյա Գրիգորյանի գրականագիտական կարողությունները» (էջ 5):

Ճշմարիտ դիտարկում: Երկխոսության սկզբից մինչև վերջին ընդհանրացում՝ Ամալյան հարցադրումների առանցքում հոլովման է բերում արվեստի աշխարհում Հայտնության առեղծվածային խորհուրդը, ժամանակակից հայ քննարկության վիճակը, տեսական-քննադատական և փիլիսոփայական գրականության ուսումնասիրության անհրաժեշտությունը, Սևակագիտության հարցում սարինյանական ներդրումը, նորագույն շրջանի և արդի հայ պոեզիայի զարգացման միտումները, հայ գրականության արցախյան հատվածի գործընթացը, Սերգեյ Սարինյան-Վարդան Հակոբյան, Սարինյան-Պարույր Սևակ փոխհարաբերությունների արժեքը, գեղարվեստական խոսքի թարմացման խնդիրը, գեղարվեստական գրականության պատմականությունն ու փիլիսոփայությունը, հայոց գաղափարաբանության սարինյանական հայտնագործությունը և այլ հիմնախնդիրներ: Եվ հաճելին այն է, որ Ա. Գրիգորյանի հասուն այս հարցերն ստացել են իրենց համոզիչ ու սպառիչ պատասխաններն արդի հայ պոեզիայի ու գրականագիտության նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Վարդան Հակոբյանի կողմից:

Ժողովածուի հասցեախոսքում կարդում ենք. «Գիրքը կարող է որպես ուսումնամեթոդական օժանդակ ձեռնարկ ծառայել բուհերի բանասիրական ֆակուլտետների ուսանողության, ուսուցիչների և ընթերցողական լայն լսարանի համար» (էջ 2):

Հիրավի այդպես է: Կրկին ընդգծենք, որ գրքի հաջողությունը պայմանավորված է երիտասարդ գրականագետ Ամալյա Գրիգորյանի գիտելիքների հարուստ պաշարով, նրա քրտնաջան աշխատասիրությամբ:

**Սուկրատ ԽԱՆՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,**  
**ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ**

**Հ Ա Ռ Ս Ա Ր Ա Ր**  
**ԽՄԲԱԳԻՐ՝**  
**Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ**

Հիմնադիր՝  
«Լուսարար»  
ՓԲԸ

Ստեփանակերտ,  
Հ. Թունանյան փ. 95, ☎ 94-38-99,  
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրազրույցում վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության 8.08.2018թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: